ԼԵՆԻՆԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Գ. Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Լենինը շատ օրեր ու ամիսներ է անցկացրել հայրենի և արտասահմանյան գրադարաններում. օգտվել նրանց գրքային հարուստ ֆոնդերից. գրել գիտահեղափոխական աշխատություններ։ Միայն «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունը գրելիս նա օգտվել է 583 գրքից։ Այն մասին, թե գիրքն ինչպիսի խոշոր դեր է խաղացել Լենինի կյանքում, նրա գրադարանավարուհի Շ. Մանուչարյանը գրում է. «Մի անգամ ինձ հետ զրուցելիս Ն. Կ. Կրուպսկայան նկատեց. Գրքերը Լենինի կյանքում վիթխարի դեր են խաղացել։ Դրանք նրան օգնեցին այն հսկայական աշխատանքում, որ նա կատարում էր. գրքերը նրան տվեցին այն գիտելիքները, որոնցով նա հիանալիորեն զինվում էր, իսկ առանց դրա նրանից չէր կարող դուրս դալ այն Լենինը, որին մենք բոլորս գիտենք»[1]։ Նույնն է հաստատում իր հիշողություններում նաև Մ. Ի. Ուլյանովան. Վլադիմիր Իլյիչը իր ամբողջ գիտակցական կյանքում մշտապես ձգտել է դեպի գիտելիքները՝ ինչպես աքսորում, այնպես էլ արտասահմանում։ Նա միշտ էլ օգտագործել է իր ազատ ժամանակը, որպեսզի լինի դրադարանում, շարունակի գրքերի ուսումնասիրությունը, այն էլ ոչ թե մեկ, այլ բազմաթիվ դրադարաններում։

«Իսկրայի» հրատարակությունը Լոնդոն փոխադրելու կապակցությամբ, Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան 1902 թ. ապրիլի 12-ին Մյունխենից առաջին անգամ մեկնում են Լոնդոն։ Դա միաժամանակ Լենինին հնարավորություն է տալիս օգտվելու Բրիտանական թանգարանի հարուստ գրադարանից, որն աշխարհի խոշորագույն գրադարաններից մեկն էր։ XX դարի սկզբին նրա ֆոնդերում կային 2,5 միլիոն գիրք, 50 հազարից ավելի ձեռագիր, 75 հազարից ավելի փորագրանկարներ, նկարներ և քարտեզներ։ Մասնավորապես հարուստ էր նաև ռուսական գրականության բաժինը, որը համալրված էր ոչ միայն ռուսական ընթացիկ, այլև հեղափոխական անլեգալ գրականությամբ։ Դեռ Մյունխենից մեկնելուց առաջ Լենինը Լոնդոնում բնակվող Ա. Ա. Յակուբովսկայային վաղորոք նամակ է գրում, խնդրելով մի քանի տվյալներ հաղորդել Բրիտանական թանգարանի գրադարանից օգտվելու պայմանների մասին. անգլերեն լեզուն անբավարար իմանալը արգելք չի հանդիսանա արդյո՞ք գիրք պատվիրելուն և ստանալուն, անհրաժեշտ է արդյո՞ք երաշխավորող ընթերցանության իրավունքի համար տոմս ստանալու, կարելի՞ է արդյոք գրադարանում գրվել այլ ազգանունով՝ առանց համապատասխան փաստաթղթի։ Լենինին միաժամանակ հետաքրքրում էին գրադարանի մասին ընդհանուր տվյալները, նրա ֆոնդերը, ընթերցանության հարմարությունները։

Լոնդոն ժամանելուց հետո Լենինը առաջին հերթին մտահոգվում է Բրիտանական թանգարանի գրադարանից օգտվելու հարցով։ Բայց գրադարանի

---

1 Շուշանիկա Մանուչարյան, Վլադիմիր Իլյիչի գրադարանում, Երևան, 1966, էջ 122։

ընթերցող դառնալը բավականին դժվարությունների հետ էր կապված. նախ հարկավոր էր երաշխավորագիր և երկրորդ անհրաժեշտ էր ապացուցել, որ ցանկացած գրականությունը Լոնդոնի մյուս գրադարաններում չկա։

Գրադարանից օգտվելու երաշխավորագիր Վ. Ի. Լենինին 1902 թ. ապրիլի 20-ին տալիս է Անգլիայի արհեստակցական միության ընդհանուր ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Ի. Խ. Միտչելլը։ Երաշխավորագիրը ստանալու հաջորդ օրն իսկ, Լենինը անգլերեն լեղվով թանգարանի դիրեկտորին է գրում հետևյալ դիմումը. «Սըր, Դիմում եմ Ձեզ, խնդրելով տալ ինձ Բրիտանական թանգարանի ընթերցասրահ հաճախելու իրավունքի տոմս։ Ես եկել եմ Ռուսաստանից ագրարային հարցը ուսումնասիրելու համար։

Կցում եմ պարոն Միտչելլի հանձնարարական նամակը»։

Բայց ընթերցողական տոմսի ստացումը մի քանի օր ձգձգվում է։ Հարկ է լինում Ի. Միտչելլից նոր երաշխավորագիր ստանալ, ապա և նորից դիմել թանգարանի դիրեկտորին։ Լենինը գրադարանից օգտվելու համար միանգամայն հասկանալի պատճառներով, նշում է, որ մասնագիտությամբ իրավաբանության դոկտոր է, Յակոբ Ռիխտեր անուն-ազգանունով. այդ անվան տակ էր բնակվում Լենինը Լոնդոնում եղած ժամանակ։ Ապրիլի 29-ին Լենինը ստանում է Բրիտանական թանգարանի գրադարանի ընթերցողական տոմս։ Այդ օրը գրադարանի ընթերցողների հաշվառման մատյանում Լենինի մասին գրի է առնվում հետևյալ տվյալները. «Յակոբ Ռիխտեր, իրավաբանության դոկտոր, Հուլֆորդսկվեր, ընթերցողական տոմս № 72433»։

Լենինին ընթերցողական տոմս է տրվում երեք ամիս ժամանակով. հուլիսի 28-ին Լենինը վերականգնում է իր ընթերցողական իրավունքները և շարունակում իր ամենօրյա հետազոտությունները։

Լոնդոնում ապրելու տարիներին, սկսած 1850 թ. մինչև իր կյանքի վերջը այդ նույն գրադարանի մշտական ընթերցողն էր Կարլ Մարքսը։ Գրադարանում մինչև հիմա էլ պահպանվում է ընթերցողների այն մատյանը, որտեղ գրված է, որ 1873 թ. հունվարի 11-ին Մարքսը վերականգնել է իր ընթերցողական իրավունքները և ստացել է № 1833 ընթերցողական տոմսը։ Այդ գրադարանում է նա գրել «Լուի Բոնապարտ Բրյումերի տասնութը», «Պարոն Ֆոգտ», «Արևելյան հարց», «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» գրքերը և «Կապիտալի» մի զգալի մասը։ Այդ նույն գրադարանում աշխատել է նաև Ֆ. Էնգելսը, որը դեռ 1842—1843 թթ. նյութեր է հավաքել «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» աշխատությունը գրելու համար։

Մեկ տարվա ընթացքում՝ 1902 թ. ապրիլի վերջից մինչև 1903 թ. ապրիլի վերջը Լենինը սիստեմատիկաբար եղել է Բրիտանական թանգարանի գրադարանում։ Ինչպես իր հիշողություններում գրել է Ն. Կրուպսկայան, Բրիտանական թանգարանի գրադարանում շատ լավ էր կազմակերպված գրքի սպասարկման տեխնիկան, ընթերցողների համար ստեղծված էին պարապելու լավ հարմարություններ։ Հատկապես լավ հիմքերի վրա էր դրված ինֆորմացիոն աշխատանքը՝ նոր ստացված գրքերի մասին։ Գրադարանն ուներ բոլորաձև ընթերցարան՝ 452 ընթերցողի համար։ Նրա կենտրոնում աշխատել է հերթապահ-մատենագիրը, որն իր տրամադրության տակ ունեցել է մի քանի հարյուր տպագիր կատալոգներ՝ գրադարանի գրքերի վերաբերյալ։ Հենց ընթերցասրահում տեղավորված էին տեղեկատու գրքեր՝ բառարաններ, հանրագիտարաններ, մատենագիտական ցանկեր, կապիտալ երկերի ժողովածուներ՝ թվով մինչև 20

հազար գիրք։ Բացի այդ, ընթերցողը կարող էր ինքն անմիջականորեն օգտվել 50 հազար գրքից բաղկացած առձեռն ֆոնդից։

Լենինը հետագայում վերհիշելով Բրիտանական թանգարանի մասին, նշել է, որ յուրաքանչյուր ընթերցող ունի իր առանձին տեղը, որտեղ կարող է իր ցանկացած ձևով դասավորել ստացած գրքերը, կատարած քաղվածքները, նշումները և այլն։ «Դուք գրքերը պատվիրում եք և անմիջապես բերում, դնում են ընթերցողի սեղանին»—ասել է նա։

Բրիտանական թանգարանի գրադարանում Լենինն աշխատել է սոցիալ-տնտեսական թեմաների վրա, խմբագրել է «Իսկրա» թերթը և գրել է «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը, կազմել է «Մարքսիստական հայացքները ագրարային հարցի մասին Եվրոպայում և Ռուսաստանում» դասախոսությունների կոնսպեկտները, կատարելագործել է անգլերենի իմացությունը։ Օրվա առաջին կեսին Լենինը միշտ աշխատել է գրադարանում, իսկ երկրորդ կեսին՝ տանը։ Ինչպես վերհիշում է Ն. Կ. Կրուպսկայան, Լոնդոնում ապրելու տարիներին՝ 1902—1903 թթ. Վլադիմիր Իլյիչը լայնորեն օգտվել է նաև Լոնդոնի ընթերցարաններից[2]։ Նա Բրիտանական թանգարանի գրադարանում մեծ մասամբ պարապել է ընթերցարանի այն մասում, որտեղ տեղեկատու դրականությունն էր տեղադրված։ Ոչ միայն այն տարիներին, այլ նաև հետագայում, երբ Լենինը եղել է Լոնդոնում, մտահոգվել է Բրիտանական թանգարանի գրադարանում աշխատելու հարցով։ Երբ Լոնդոնում տեղի էին ունենում մեր կուսակցության II (1903), III (1905) և V (1907) համագումարները, Լենին ժամանակ էր գտնում նաև Բրիտանական թանգարանի գրադարանում լինելու և պարապելու համար։ Նա գոհունակությամբ էր վերհիշում թե՛ գրադարանի և թե՛ այնտեղ ընթերցողների սպասարկման դրվածքի մասին։ «Երբ ես լինում եմ Լոնդոնում, մի առիթով ասել է նա,— այստեղ միշտ աշխատում եմ գրադարանում։ Հիանալի հիմնարկություն է, նրանից շատ բան կարելի է սովորել։ Հատկապես այդ արտակարգ տեղեկատու բաժինը։ Ամենակարճ ժամանակամիջոցում ուզած հարցի վերաբերյալ ձեզ տեղեկանքներ կտան, թե ո՞ր գրքերում դուք նյութեր կգտնեք ձեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ։ Եվ որքան լավ ու հարմար է Լոնդոնի գրադարանում աշխատելը»[3]։

1905 թ. հեղափոխությունից հետո՝ ռեակցիայի տարիներին, պատմական զարգացման դժվարին ու բարդ պայմաններում, գաղափարական պայքարի խնդիրները կուսակցության առաջնորդից պահանջեցին խորապես վերլուծել փիլիսոփայության հրատապ հարցերը։ Նա 1908 թ. ժնևի «Ընթերցասերների ընկերության» գրադարանում աշխատում է «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի վրա։ Այդ ընթացքում էլ անհրաժեշտ է լինում ուսումնասիրել XIX դարի անգլիական ֆիզիկոսների և փիլիսոփաների աշխատությունները։ Այդ նպատակով նա 1908 թ. մայիսին ժնևից տեղափոխվում է Լոնդոն և մոտ մեկ ամիս շարունակում աշխատել Բրիտանական թանգարանի գրադարանում՝ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի վրա։

Լենինը վերջին անգամ Բրիտանական թանգարանի գրադարանում պարապել է 1911 թ. նոյեմբեր ամսին, երբ կարճ ժամանակով եկել է Լոնդոն և ռեֆերատ կարդացել «Ստոլիպինը և հեղափոխությունը» թեմայով։ Նոյեմբերի

---

2 Ն. Կ. Կրուպսկայա, Գրադարանային գործի մասին, Երևան, 1961, էջ 87։

3 Հիշողություններ Վլադիմիր Իլյիչ Լենինի մասին, մ. 1, Երևան, 1957, էջ 473։

10-ին Փարիզ գրած իր նամակում նա հայտնում է, որ նստած է Բրիտանական թանգարանի գրադարանում և մեծ ուշադրությամբ կարդում է 60-ական թվականների Շվեյցերի գիրքը։

Այս օրերին՝ Լենինի ծննդյան 100-ամյակի տոնակատարություններին ակտիվորեն մասնակցում են նաև Եվրոպայի բազմաթիվ գրադարաններ, հատկապես այն գրադարանները, որոնցից նա օգտվել է (Բեռլինի, ժնևի, Լոնդոնի, Փարիզի և այլն)։ Բրիտանական թանգարանի գրադարանը կազմակերպել է գրքերի խոշոր ցուցահանդես՝ նվիրված Լենինին և նրա ժամանակաշրջանին։

В. И. ЛЕНИН В БИБЛИОТЕКЕ БРИТАНСКОГО МУЗЕЯ

Г. В. МКРТЧЯН

Резюме

В. И. Ленин находясь в эмиграции для создания своих научно-теоретических трудов широко использовал богатейшие фонды западноевропейских библиотек, особенно фонды библиотеки Британского музея.

С переходом редакции газеты «Искра» из Мюнхена в Лондон 12-го апреля 1902 г. Ленин направляется в Лондон. Здесь он в течение года пользуется богатейшими фондами библиотеки Британского музея, где в свое время также занимались основоположники научного коммунизма К. Маркс и Ф. Энгельс. В годы реакции, после революции 1905 г., когда обострилась идеологическая борьба, Ленин работал над созданием «Материализма и эмпириокритицизма». В связи с этим Ленин в 1908 г. из Женевы едет в Лондон с целью изучения произведений английских физиков и занимается в библиотеке Британского музея.

В. И. Ленин в ряде своих писем и высказываний с удовлетворением отмечал хорошую работу библиотеки Британского музея.